



ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

« 25 » Մարտ 2022թ.

ՀՐԱՄԱՆ N 128-Չ

«ՎԻՉ ԷՅՐ ՀԱՆԳՐԻ» ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի ԹԻՎ 99-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ավիացիայի մասին» օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1005-Ն որոշման N 1 հավելվածի 19-րդ կետով և հիմք ընդունելով «Վիզ Էյր Հանգրի» ավիաընկերության 2022 թվականի մարտի 21-ի հայտը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Վիզ Էյր Հանգրի» ավիաընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Վիեննա/LOWW/-Երևան/UDYZ/-Վիեննա/LOWW/ երթուղով՝ 2022 թվականի մարտի 28-ից մինչև 2022 թվականի ապրիլի 10-ը և 2022 թվականի մայիսի 2-ից մինչև 2022 թվականի հունիսի 12-ը՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ և 2022 թվականի ապրիլի 11-ից մինչև 2022 թվականի մայիսի 5-ը և 2022 թվականի հունիսի 13-ից մինչև 2022 թվականի հոկտեմբերի 28-ը՝ շաբաթական 3 (երեք) չվերթ հաճախականությամբ Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություններ:

2. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2022 թվականի մարտի 15-ի «Վիզ Էյր Հանգրի» ավիաընկերությանը Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի

ներսում և տարածքից դուրս կանոնավոր առեվտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություններ և «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով նախատեսված արտոնություն տալու և քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2021 թվականի մարտի 12-ի թիվ 90-Ա հրամանում փոփոխություն կատարելու մասին» թիվ 99-Ա հրամանի 1-ին կետի «Վիեննա/LOWW/-Երևան/UDYZ/-Վիեննա/LOWW/ երթուղով՝ 2022 թվականի մարտի 29-ից մինչև 2022 թվականի հուլիսի 3-ը՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ և 2022 թվականի հուլիսի 4-ից մինչև 2022 թվականի հոկտեմբերի 28-ը՝ շաբաթական 3 (երեք) չվերթ հաճախականությամբ» բառերը հանել:

3. Կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետի պարտականությունները կատարողին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվության հանձնումն Ընկերությանը:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

 ՄԻՀՐԱՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 029/2022
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ

PERMISSION 029/2022
TO THE FOREIGN AIRCRAFT OPERATOR FOR SCHEDULED AIR
SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE REPUBLIC OF ARMENIA

Օդանավ շահագործողը
Aircraft Operator

«Վիզ Էյր Հանգրի» ՍՊԸ
"Wizz Air Hungary" LLC

Օդանավի (օդանավերի) տիպը
(տիպերը)
Type(s) of aircraft(s)

A320 (320, Y180), A320 (320, Y186), A321 (321, Y230),
A320neo (32N, Y186), A321neo (32Q, Y239)

Հաճախականությունը
Frequency

28/03/2022-10/04/2022 և 02/05/2022-12/06/2022-
շաբաթական 2 չվերթ
28/03/2022-10/04/2022 and 02/05/2022-12/06/2022- 2 flights
per week

11/04/2022-01/05/2022 և 13/06/2022-28/10/2022 –
շաբաթական 3 չվերթ
11/04/2022-01/05/2022 and 13/06/2022-28/10/2022– 3 flights
per week

Երթուղին
Air route

Վիեննա/LOWW/-Երևան/UDYZ/-Վիեննա/LOWW/
Vienna/LOWW/-Yerevan/UDYZ/-Vienna/LOWW/

Թույլտվության գործողության ժամկետը
Permission validity

28/03/2022 մինչև 28/10/2022
28/03/2022 till 28/10/2022

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ
ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ
ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ACTING CHAIR OF
CIVIL AVIATION COMMITTEE
MIHRAN KHACHATRYAN

25.03.2022
(տպյու ամսաթիվը)
(date of issue)

X

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN MIHRAN 3308540266

